ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքի խոսքը Ոստիկանության աշխատողի օրվա առթիվ

16.04.2025

Հայաստանի Հանրապետության ոստիկանության հարգելի՛ ծառայողներ,
Շնորհավորում եմ բոլորիդ ձեր մասնագիտական օրվա՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության օրվա առիթով:
Վերջին տարիներին սկսված և ընթացքի մեջ գտնվող բարեփոխումների շնորհիվ օր օրի նորացվում, կատարելագործվում, վերափոխվում ու նոր բովանդակություն է ձեռք բերում Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգը՝ ավելի ամրապնդելով հայրենի պետականության հիմքերը, բարձրացնելով պետական ու հասարակական կարգի պահպանության հնարավորությունները:
Համոզված եմ, որ իրականացվող արմատական բարեփոխումները ոստիկանությանն օժտելու են նոր մտածողությամբ, ոստիկանի գործի արդիական ընկալումով, և դուք առավել ջանքով եք շարունակելու ծառայությունը հանուն օրենքի գերիշխանության և հասարակության անվտանգության:
Այս վստահությամբ՝ կրկին շնորհավորում եմ ոստիկանության բոլոր ծառայողներին մասնագիտական տոնի կապակցությամբ:
Շնորհավորում եմ նաև ոստիկանության վետերաններին, մաղթում երկար ու անխռով տարիներ:
Շնորհավորում եմ ոստիկանական ընտանիքներին, որոնք ամուր ու հուսալի թիկունք են իրենց հարազատների համար:
Շնորհավոր տոնդ, ոստիկա՛ն:
Լավագույն ցանկություններով՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան